



ՅՈՎ.ՆԱԴԻՍԻ
ԼՍՏՈՒԼՆԵՐԵՆԵ
ԿԱՆ. ԲԱՐՈՅԱԿԱՆ.

281.6

Լ.Ք. աղաքական իրողութեց
սահմանք:

Երկասիրութեամբ մեղուաջան
արանց 'ի մի վայր' ըստ կարգի
Լ. յբուբենիցն, հաճաքե
ցեալք:

Դ. Լոյսածեալ Տպիւտ, Լ. Բրդեամբ
Լ. Կապիւլաշանիւ թ. օմայ Լ. Կապիւլ
Ս. Կարդապետի Ս. Կանանդեցապ:

ՈՐ հրահանգից վարժարա նի.
է տակաւին ներկուռ բա նի.
Կամ 'ի հանդէս ֆիլոսո ֆի.
զանձն իմաստիւք կըրթեալ չունի.
Օայս սահմանաց թէ միտս ունի.
մեծի ուսման ժառանգ լի նի.



ՅԵՄԻ ՏԵԱՌՆ. 1704

ՅԵՄՍԵԼԻԴԵՄ.

1001

402



Դմէջ էակաց են, որք անդոյք
 ասին, և երկբայաբար ունին
 զգոյութիւն. որպիսիք են՝ յա
 ռալէզ, եղջերուաքաղ, բլբ
 տրի։ Օայսպիսի էակացս
 հարցախնդրի միայն. Եթէ
 է. և ոչ Օ ի՞նչ է։ Եւ ևս՝
 որք գոյականք ասին, և աներկ
 բայաբար ունին զգոյութիւն.
 զորոց հարցախնդրի, Օ ի՞նչ
 է. և պատասխանելի է հար
 ցախնդրոյն սահմանաւ ենթա
 կայ հարցմանն։ Բեզ օրի
 նակ. հարցախնդրի Օ ի՞նչ
 է իմաստասիրութիւն։ Պատաս
 խանի. Վիտութի գոյից, ի
 որում գոյք են։ Կամ, Վիտութի
 Թի Միայնոց, և մարդկայնոց
 իրողութիւն։

Ստուգեա՛ լ'նձն է՛ անհատ, և անհա
ջորդելի գոյացութիւն բանական
բնութեանն: Յաւերժահարսունք
են մահկանացու, աներևոյթ, և
բնագէտ արարածք: Բայց զի՞նչ
է սահման, եթէ ոչ Բ.Լ.Ն, համա
ռօտ՝ յայտնիչ բնութեւն ենթակայ
իրին: Լ.բդ՝ ըստ որում հանձար
մարդկան առ՛ի զգուշանալ յ'ա
ռաւելաստացութենէ, և՛ի սլակա
ստատացութենէ ագարակային վայ
րից, եգիտ զօրէնս, կարգս, անջը
պետս, փակս, սահմանս՝ հրամանս,
պատս, և զցանկ ստացուածոցն. զի
իւրաքանչիւրդ զիւրայինս վայելես
ցէ՛ և յ'այլոցն հրաժարեսցէ:
Բստ այսմ՝ ոճի ևս նոյն հանձարե
ղութիւն իմաստասէր արանց եգիտ
զսահմանն իմաստասիրական. որով
ի՛ ձեռն կարձառօտ բանի յայտնես
ցէ՛ զառուսցէ, և որոշեսցէ զբնու
թիւն միոյ ենթակայ իրի յ'այլմիւս
ենթակայ իրի բնութեանն: զոր
օրինակ. Սահման մարդոյն է՛:
Բանական կենդանի: յ'Լ.սեն՝
Բանական. մարդն որոշի՛ և տար
բերի յ'անբանից, և յ'իմանալեաց:
Իսկ՝

Իսկ յ'ասելն՝ կենդանի . մարդն զա
 տուցանի յ'անկենդանեացն՝ և յ'ան
 ջնչոցն, կամ՝ յ'անզգայիցն . նայե՛
 սահմանաւն յայտնի բնութի, կամ
 էութիւն մարդոյն . և այս համա
 ռօտ բանիւ : Ի՛ | աջիական լե
 զուաւ ասի՝ Գէֆինիցիօ . Յու
 նականաւն () րիամօս . Հերբայա
 կանաւն՝ Գադար . Լրաբերէն՝
 Հադ : Լստուած եղ ծովուն սահ
 մանս, և ասաց . յ'այդ վայր եկես
 ցես, և այլ մի անցանիցես . այլ
 այդրէն ՚ի քեզ խորտակեսցին ա
 լիք քո . Յօբ . 38 . 10 : Ս' սահմա
 նայ, և սորին նշանակութեցն տե՛ս
 Ծանդոց . 10 . 19 : Յեսու . 13 :
 15 : 16 : 17 : Սաղմոս . 103 . 9 : 148
 6 : Լուակ . 23 . 10 : Սատթէոս .
 2 . 16 : և յ'այլ բազում տեղիս :

Ողջ լի՛ր :

Տո՛ւր ՚ի խրատ զսիրտ քո, և զլո՛ւ
 լիս քո սրատրաստեա՛ն բանից իմաս
 տութեան : Լուակ : 23 . 12 :

Ի՛սկ

Ճշմարտութեան լի՛ր հետեւեալ .
 ուղիղ խօսից սիրօղ գը . տեալ :



Ն. րիւլ թիւն. Ն. րդա թիւ թի յո չեմիւ թիւն.

Աւ յուրի ջանեան
 Ն էր միշտ յո չեմ
 Ն. րդարաբան.
 Ն. ռցես պըսակ
 Ն. րիւլ թեան:



Սահմանք ըստ դասակարգման Տառից :



Գ. Ա. Հ. Ո. Ի
Թ. Ի. Ի. Ն. Լ. Բ. Ս. Տ.
Ս. Ե. Թ. Ա. Կ. Ա. Ն. Ի. Ն. Ա. Ն.

յադ՝ և անհամեատ ցանկու
թիւն փառաց, կամ այլ իւրաքան
չիւր իրաց :

Բ. գահու թիւն է՝ ըստ տեսականին
անկարգ սէր արծաթոյ . կամ այնց
իրաց՝ որք ընդ արծաթոյ վաճառին :
Բ. գահու թիւն է՝ իւրաքանչիւր իրի
անյադ, և անհամեատ տենչումն :

Բ. աղակ է՝ կամք առնլոյ վրէժ
բարձրաձայնելուն :

Բ. ղո՛թք է՝ դարձումն մտաց առ Բ. ծ,
սուրբ՝ և խոնարհ յօժարութիւն :

Բ. ղո՛թք է՝ ելումն հոգւոյն յ'երկ
րաւորացս յ'երկնայինն :

Բ. ղո՛թք է՝ խնդրո՛ւածք պատշա
ճաւոր իրաց յ' ստուծոյ :

Բ. Բ. բարհաւաճութիւն է՝ շարժումն
մբտացն, որով շարժի որ պար
ծիւ ունիւ զայն, զոր ոչ ունի,

Լ Կամ ունիլ յ'ինքենէ :

Ե՛ւ, հնազանդութի է՝ խտասիրա
կարկամեալ մտօք, ո՛չ հնազան
դիլ՝ ում պարտի :

Ե՛նպատկառութիւն է՝ ուրացումն
պատշաճաւոր պատուոյն այնմ, ու
րում պարտի :

Ե՛նզգամութիւն է՝ համարձակիլ
յայնս՝ զոր ո՛չ կարէ :

Ե՛նէ՛ծք է՝ խնդրումն չարի :

Ե՛նարգութի է՝ նախագիտութիւն
անօրէնութե՛ն ոմանց, Լ նախապատ
րաստութի՝ դատապարտութեան
նոցին .

Ե՛նջերմեռանդութի է՝ յետս դար
ձումն 'ի՛տք, Լ 'ի խոնարհ տէնչա
նացն՝ որ առ Ե՛՛ծ :

Ե՛նխոհեմ ջերմեռանդութի է՝, որ
ո՛չ կառավարի բանականութե՛ն :

Ե՛նհամբերութի է՝ խոժոռեալ
յարձակումն հոգւոյն, առ 'ի վրէժ
խնդրութիւն անիրաւութեցն :

Ե՛նյարատւողութիւն է՝ թմբբութիւն
մտաց, թողլով զգործն կի
սակատար :

Ե՛նոխակալութի է՝ հանդարտութի
սրտի, որ ունի կարողութի առնուլ
վրէժ :

Ե՛ն

Լ'նոխակալուծի է քաղցրութիւն
մեծագունին առ փոքրագոյն պատ
ժապարտան:

Լ'նձն իշխանութի է զօրութիւն
բանականին՝ և կամացն, որով ընտ
րի բարին՝ մերձ կալով շնորհացն.
և չարն, իբացեայ գոլով շնորհացն:
Լ'նձն է բնութիւն մտաւոր անհա
ղորդելի կայացութիւն:

Լ'նձն է բանական բնութեանս ան
հաղորդելի կայացումն:

Լ'նձն է ենթադրելութիւն զանա
զանեալ յատկութեամբ ունելով
արժանաւորութիւն:

Լ'նձն է նախկին գոյացութիւն
մտաւոր բնութեան:

Լ'նձն է բանական բնութեան ան
բաժանելի գոյացութիւն:

Լ'նձն է ենթադրեալ ըստ ինքեան
միայն ըստ կերպի եզական իմն բը
նութե, և գոյացութեան:

Լ'նձն է ենթադրութիւն զանազա
նեալ յատկութիւն, վերաբերեալ
պո'ի սրտիւ բանականին:

Լ'նուն է ձայն նշանական ը կամաց,
թարց ամանակի, որոյ ոչինչ մասն
զատեալ՝ նշանակէ որոշակի՝ ուղղա
կի:

Լ'նուն

Եւ նո՛ւն է՛, որ նշանակէ՛ զգոյացուծի՛
հանդերձ ողակուծք՛:

Եւ Պատամբուծի է՛, իշխանուծե՛
մեծագունիցն խոտորեւոյ՛ ընդ
գիմանալ՛:

Եւ պաշխարուծի է՛ զանցեալ չարն
ողբալ, և զողբալին՝ ո՛չ ևս գործել՛:

Եւ պաշխարուծի է՛ զյառաջագոյն
գործեալ մեղսն լալ, և զլալին ո՛չ
գործել՛:

Եւ Ռաքինուծիւն է՛ բարի որակու
ծիւն մտաց, որով բարձոք կե
ցեալ լինի, զոր ոչոք չարաչար առ
նու՛ 'ի կիր, զոր միայն Եւ՛ծ ներգոր
ծէ՛ 'ի մարդն՛:

Եւ ռաքինուծի է՛ ունակուծի մտաց՝
բարձոք կարգաւորեալ՛:

Եւ ռաքինուծի է՛ ունակուծի մտաց,
կալովն՝ 'ի մէջն, 'ի մեր կողմանէ՛:

Եւ ռաքինուծի է՛ ունակուծի մտաց,
ըստ կերպի բնուծե՛ հաւանական
բանականուծեանն՛:

Եւ ռաքինուծի է՛ հաւասարուծիւն
կենաց համաձայնեալ բանականու
ծեանն՛:

Եւ ռաքինուծի է՛ կարգաւոր կատա
րեալ իրին առևս բարեգոյնն՛:

Բռաքինութիւն է՝ որ բարի առնէ
զունօղն, և զգործ նորին բարի:

Բռաքինութիւն է՝ կամանոր ունա
կութիւն կացեալն՝ ի մէջն՝ ի մերս
կողմանէ, սահմանեալ բանակա
նաւն, ըստ այնմ, զոր իմաստունն
սահմանեցի:

Բռաքինութիւն է՝ ունակութիւն
ողւոյ, վայելչութի բնութե, բան
կենաց, մաքրութիւն բարուց, պաշ
տօն Բճութեան, պատիւ մարդոյ,
արժանաւորութիւն յաւիտենական
երանութեանն:

Բռաջարկութիւն է՝ բան ստորասա
կան, կամ բացասական ուրումն
զումեմնէ, կամ ուրումն ապումեքէ:

ԲՍտուածալաշտութիւն է՝ կրօնք,
որ տայ Բստուծոյ զղատեալ
հոգս, և զխտրութիւնս:

ԲՏեղութիւն է՝ հընացեալ հեռ
սրտին:

Բտեղութիւն է՝ ատել զմարդ՝ վասն
բարւոյն:

ԲՐհէստ է՝ ուղղութի բանին առ
գործս, որ անցանէն յարտա
քին նիւթս:

Բրիութիւն է՝ ձեռնարկօղ ի յոյժ
դժուա

դըժոճարինս՝ վասն բարւոյն :

Արիութիւն է՝ ունակութիւն հոգւոյն, որով զնմանյաջողութիւն, և տոյժս ընչից՝ որք ոչ են ընդ իշխանութիւն մերով՝ խօտեմք :

Արիութիւն է՝ հաստատութի մտայ՝ ընդդէմ փորձութեց աշխարհիս :

Արիութիւն է՝ սէր դիւրաւ տանել նմի՝ վասն սիրեցելոյն :

Արիութիւն է՝ ընդունելութի նախատեսեալ վշտացն, և համբերութի աշխատանայ՝ վրառաքինութի :

Արիութի է՝ բանաւոր արձակումն յահարկումն՝ հանդերձ հաստատուն համբերութիւն՝ ի նոյնսն :

Արիութիւն է՝ առաքինութի ըստ քաղաքականին՝ ամբառնալ զոգին ի վերոյ՝ քան զնմա՝ յերկիւղ վտանգին, և յոչինչ իրէ երկնչիլ եթէ ոչ՝ ի զաղրութեանց, և անյաջողմանց՝ և յաջողմանց զօրեղաբար տանել :

Արիութի է՝ ըստ մաքրողականին՝ ոչ զարհուրիլ թ հեռանալ հոգւոյն ի մարմնոյն, և ոչ սպառիլ ինեղութեանց բնութեանն :

Արիութիւն է՝ ըստ մաքրեալ հոգւոյն

գւոյն անդիտանալ զգիրսն, ոչ
յաղթիլ՝ ոչ գիտել բարկանալ՝ և
ոչ իմիք ցանկալ:

Արիութիւն է՝ ըստնախազաղափա
րականին՝ Աճային զօրութեանն, որ
միշտնոյն է՝ և ոչ երբեք տարութիւն:

Արդարութիւն է՝ ունակութիւն
հոգւոյ առ՝ի պահել զհասարակ օգ-
տութիւնն, և առ՝ի հատուցանել
իւրաքանչիւրումեք ըստ արժանոյն:

Արդարութիւն է՝ ուղղութիւն կա-
մաց՝ վասն ինքեան:

Արդարութիւն է՝ ընդ բարւոյն դաշն
բնութե գտեալ յ'օգտութի բազմաց:

Արդարութիւն է՝ կարգաւորեալ սէր:

Արդարութիւն է՝ սէր միայն ԱՅ
սիրեցելոյն ծառայել՝ և վստայն
ուղղապէս իշխել ինքեան, և իւ-
րայնոյն:

Արդարութիւն է՝ ըստ քաղաքակա-
նին պահել իւրաքանչիւրումեք՝
զոր ինչ յ'իւրն է:

Արդարութիւն է՝ ըստ մաքրողակա-
նին պահել զգործ իւրաքանչիւր
առաքինութեանց առ մի ճանա-
պարհ, այսինքն՝ արդարութեան:

Արդարութիւն է՝ ըստ մաքրեալ հո-
գւոյն

դւոյն՝ այնպէս ընդ վերին մտացն
ընկերակցել՝ մինչ զի սրահեսցէ ընդ
նմա դաշն մշտնջենաւոր նմանե
լով նմին :

Արդարութիւն է՝ նախադադարա
րականին մշտնջենաւոր՝ և յաւիտե
նական օրինօք ոչ կասիլ ՚ի հանա
սպազորդութենէ գործոյն իւրոյ :

Արդարանալն է՝ շարժումն յանար
դարութենէն յարդարութիւնն :

Արդիւնքն է՝ զօրութի բարի գոր
ծոյ առ ՚ի ընդունել զայն՝ որ ոչ ու
նի : Այլ կամ առ ՚ի ունիլ ևս արդա
րապէս՝ զորինչ ունի :

Արատ է՝ գարշելի որակութիւն՝ որ
մնայ ՚ի հոգին ՚ի գործոյ մեղայն :

Արատ է՝ ասպականութիւն պատկե
րին Աստուծոյ :

ԲԱՅ է՝ ձայն նշանական ըն կա
մայ ամանակաւ՝ որոյ մասն
ոչ է՝ նշանական զատեալ՝ որոշակի,
ուղղակի, և է՝ միշտ զայլմէց ասիցե
լոց նշանակ

Բան է՝ նշանական ըստ կամայ՝ որոյ
մասունքն նշանակեն զատեալ :

Բաց երևութիւնն՝ և նախադա

սուլթիւնն, որ է նոյն՝ է նշանակող
ճշմարտութե, կամ ստութե :

Բարեհաճոյ կամք է Մ. Յ ուղիղ
գործունեայ՝ և անյանդիմանելի :

Բանական է զօրութիւն ներխու
ղական պատճառին՝ և պատճառե
լոյն. նմին իրի՝ և բաղադրեալ :

Բարկութիւն է եռացումն՝ հան
դերձ արեամբ շուրջ զսրտիւն :

Եւ կամ յօժարութիւն ցաւեցու
ցանելոյ զոսոխն :

Բարկութիւն է անկարգ ցանկու
թիւն վրէժխնդրութեան :

Բարկութիւն է շարժումն մտայ՝
հանդերձ անկարգ ցանկութեամբ
վրէժխնդրութեան :

Բարկութիւն է անբան ամբոխումն
մըտայ :

Բարկութիւն է եռացումն յ'արեւն
շուրջ զսրտիւն յարատենչմանէ
լեղելոյն :

Բարկութիւն է տենչանք իոխա
րէն տրտմեցուցանելոյ :

Բարկութիւն է գրգռեալ շարժումն
հոգւոյ առ'ի պատիժ :

Բամբասանք է խօսք յ'առաջե
կեալ յ'ատելութենէ :

Բամ

Բամբասանք է տգեղացումն բա
րեաց այլոց:

Բ՛) Զախոհութի է կարի իմն ցան
կութի շաղաշարական հեշտուն:

Բ՛ղ Զախոհութիւն է ցանկութիւն
վաճառոտ կամաց:

Բ՛ղ Զախոհութիւն է՝ ի պիղծ տրփա
նաց լարծեալ՝ և սանձակոտոր մտաց
տապալուումն:

Բ՛ղ Զախոհութիւն է անկերպ տեն
չումն մարմնոյն՝ եռացեալ ընդդէմ
բանականին:

Բ՛ղ Զախոհութիւն է անկարգ սէր
հեշտութեանն՝ որ ըստ շոշափակա
նին, որպէս որկրամոլութիւնն ըստ
ճաշակելեացն:

Բ՛ղ Զախոհութիւն է մտաց՝ և մար
մնոյ վաճառոտ շաղախումն յառաջ
եկեալ ի պիղծ տրփմանէ:

Բ՛Ն ութիւն է ծնունդ իրողութեանց
կենդանեաց:

Բ՛նութիւն է զօրութիւն ներպա
տոճաստական՝ զնմանսն՝ ի նմանեացն
տեսակաւ արտաքսեալ:

Բ՛նութիւն է յետին տարբերութի
տեսակարար, կատարող զսահման
տեսակին:

Բնութիւն է հութիւն 'ի նիւթոյ,
 և 'ի տեսակէ բաղկացեալ՝ զոր սահ
 ման տեսակին յայտնէ:

Բնութիւն է իւրաքանչիւր գոյացու
 թի, որ կարէ առնել և կրել:

Բնութիւն է սկիզբն շարժման և
 դադարման յայնս, յորս է ին
 քեամբ և ոչ պատահմամբ:

Բնութեան շարժումն է 'ի նոյնէն
 առ նոյն, և շուրջ զնոյնիւն ան
 շարժ միջին կիտովն:

Գ. Ղընութիւն է պակասութիւն, և
 կատումն ջերմեռանդութեն
 առ 'ի կատարումն սկսեալ իրին:

Գ. Երազրապէս կատարեալ է, ո
 լում ոչինչ կարէ լինիլ յաւե
 լումն:

Գ. Թութիւն է ձրի օգնականու
 թիւն 'ի քաղցրութենէ բարե
 բարոյ մտաց՝ վասն Ա. Ե:

Գ. Ժտութիւն է ընդդիմամար
 տութիւն ճշմարտութեն՝ հան
 դերձ ապաստանութիւն աղաղակին:

Գ. Իտութիւն է ճանաչումն մարդ
 կային իրողութեանց. յօգնու
 թիւն փրկական հաւատոյն:

Գ. Խտուծիւն է՝ լոյս ուղղիչ մար
դոյն՝ ի գործել՝ և ի կիրառնու
ղծամանակաւոր իրս :

Գ. Խտուծիւն է՝ ճանաչումն բարւոյ՝
և չարի :

Գ. Ինի է՝ ջուր ի ձեռն ործոյն՝ յայլ
իմն որակուծիւն փոփոխեալ յեղ
մամբ տնկոյն :

Գ. Ոյացուծիւն է՝ իր, ունող է ու
ծեան՝ որ բնաւորեալ է ին
քեամբ էանալ :

Գ. Ողուծի է՝ ամ իւրացուցանումն
իրաց օտարաց, և ամ չարացաբ
յափշտակուծիւն :

Գ. Լտարկ բան է՝ որ ասացել
լինի առանց օգտուծեան խօ
սողին, կամ լսողին. որինչ ոչ է ի
շինուծիւն լսողայն՝ դառնայ ի
վտանգ խօսողայն :

Գ. ատարկուծի է՝ սլարապեալ յա
մենայն գործոյ բարեաց :

Գ. Վոխ է տեղի դժուարին, թը
շահառական ոգւոյ տխուր կա
սարան :

Գ. Բուծիւն է այցելուծի, և տե
սուծիւն իրիք իրի :

Գ. Բուն

Դրուծիւն է՝ հրաշափառ կարծիք
ուրումն, միոյ ուրումն յայնցանէ՝
որք յիմաստասիրուծէ ճանաչին:

Եր է այն՝ յոր լուծանի ա-
ռաջարկուծիւն, ոնց յեւթա-
կայն, և՛ի ստորոգեալն:

Եր անակ է տարրորոշումն իրին,
որ կարէ գոլ յար անունամբ՝ և
տարրորոշէ զեւթակայն:

Եւթակայ է, յորմէ ասի իր ինչ:
և ստորոգեալ է՝ որ զայլմէ ասի:

Երկին է մարմին բարձր՝ լուսաւո
րեալ ներդործուծք, և զօրու
ծք անասական ըստ բնուծէ:

Երդումն է ստորասուծիւն՝ կամ
բացասուծիւն, վկայուծք սուրբ
իրաց հաստատեալ:

Երկիւղ է ակնկալուծիւն չարի,
յորմէ խորշիլ ոչ կարէ:

Երկիւղ է փախուստ ՚ի չարէն:

Երկիւղ է սէր՝ փաղջօղ ՚ի հակա
ռակորդէ իւրմէ:

Երկիւղ է բաղձանք ը զըստման:

Երկիւղ է ակնկալուծիւն ապառ-
նի չարին:

Երանուծիւն է շնորհք ոչ իւրա-
քան

քան չիւր ումէք, այլ ճշմարիտ խմատո-
նոյն ծանուցեալ՝ համեղացուցանող
խղճի մտացն, և մե՛րձ առ փառան ։
Լերանութիւն է՝ սէ՛ր ծայրագոյն
բարւոյն, զոր արդէն զո՛ւարճութիւն
ստանայ ։

Լերանութիւն է՝ սրարառութիւն
սմեհայն բարեաց ։

Լերանութիւն է՝ յըստակ ճանաչումն
ստեղծողին ։

Լերանութիւն է՝ ծայրագոյն՝ և ան-
պատմելի ուրախութիւն, յ՛որմէ՛-
որ օտարանայ, թշուառական է՝ և
որով՝ որ զմայլի, երանելի է ։

Լերկջոտութիւն է՝ ՚ի ձանձրութե-
նէ ներհակայ անդոսնելի անկումն
բեկեալ սրտին ։

Օ Լ. յրացումն է՝ ամբօխեալ
չարակամութիւն ։

Օ Դ՝ քումն է՝ ցաւ կամա՛ւորապէս
առեալ վասն մեղաց, ունե-
լովն ՚ի մտի զխոտաովանեալն՝ և
զփոխարէնն ։

Օ Օ՝ րութիւն է՝ անշարժ մտաց
փառա՛ւորեալ բարձրութիւն
գեղեցկապէս տնօրինելով զիրա-
դժո՛ւարինս ։

Օ Ծ

Օգրութիւն է՝ մեծութիւն բարձ
րագոյ, որ տկարանայ հոգւով՝ և
մարմնով՝ տայ զարմանալի զօրութիւն:

Թ. Մրութիւն է՝ անդգայակա
նութիւն իմն հոգւոր պա
կասութեան՝ և օգտութեան:

Ե. Լ՛մանակ է՝ չափ շարժման
առաջին շարժունին:
Եւամանակ է, թիւ առաջին վեր
ջին մասանց շարժմանն:

Ե. Մաստութիւն է՝ տեսութիւն
ճշմարտութեանն խաղաղացու
ցանօղ բոլոր մարդոյն:

Եւմաստութիւն է՝ իմացական ճանա
չումն յաւիտենական կենացն:

Եւմաստութիւն է՝ ճանաչումն բա
րոյ՝ հանդերձ կարողութեամբ
խրատելոյն:

Եւմաստութիւն է՝ յոյժ բարձրագոյն
ծանօթութիւն Լ՛ծայնոյն:

Ե. Ոյս է՝ ներդործութիւն լուսաւո
րի բոտ այնմ, որ լուսաւոր:
Եւբումն

ԼՔումն է սրակատութիւն սրտա
կանաւոր ժրութեան:

ԽՂաղութիւն է կարգաւորեալ հանդարտութիւն մը տայ՝ համաձայնելոյ ՚ի բարին:

Խաղաղութիւն է կարգաւորեալ և բարեխառնեալ համաձայնութիւն մասանցն:

Խաղաղութի բանական հողւոյն է հարկաւորեալ հաւանումն խոր հրդոց, և դործոց:

Խաղաղութիւն հողւոյն՝ և մարմնոյն, է կարգաւորեալ կէտնք ՚ի փրկութիւն մարդոյ:

Խաղաղութիւն մահկանացու մարդոյն, և լ՝Յ՝ է կարգաւորեալ հաւատով ՚ի ներքոյ յաւիտենական օրինացն:

Խաղաղութիւն մարդկան՝ է կարգաւորեալ համաձայնութիւն ՚ի ներքոյ մարդկային օրինացն:

Խաղաղութիւն տան է կարգաւորեալ համաձայնութի համաբնակ հրամայողին, և հնազանդելոցն:

Խաղաղութիւն երկնային է յոյժ, և գերազանց կարգաւորեալ և համա

Մտածայնեալ յ'ընկերակցութիւն
զմայլէլոյն յ'Աստուած, և յիրեարս
յ'Աստուած:

Խաղաղութիւն քաղաքին է՝ կարգաւ
որեալ համաձայնութիւն քաղաքա
ցեայն հրամայելն, և՛ի հնազան
դիւն:

Խաղաղութիւն ուղղափառ է՝ կար
գաւորեալ համաձայնութիւն հաւ
ատացելոյ, և հաւանումն հաւա
տոյ՝ և խորհրդոյ եկեղեցւոյ:

Խաղաղութիւն ամիրաց է՝ հնա
զանդութիւն կարգի նոյնին:

Խաղաղութիւն է՝ կարգաւորութիւն
ընդդիմակայիցն:

Խեղ կատակութիւն է՝ այնպիսի
կատակ երգութիւն, որ դրդուէ՛ի
ծաղրան համեստ իրօք՝ և բանիւք:

Խիղճ մտացն է՝ բանական եւթա
դատարան, որ միշտ վիճէ՛ի մէջ
չարին՝ և բարւոյն:

Խիղճ մտացն է՝ մասն իմացման մե
րոյ:


Խիղճ մտացն է՝ դատողական բա
նաւոր:

Խիղճ մտացն է՝ ճանաչումն յ'ին
քեան:

Խիղճ

7430

A 402



Խիղճ մտայն է՝ ունակուի հոգւոյ.
առնելեացն՝ և ոչ առնելեացն:

Խիղճ մտայն է՝ ունակութի մտայ
ենթադատական բարւոյն՝ և չարին:

Խիղճ մտայն է՝ հաստատութիւն
հոգւոյ առ'ի առնել ինչ, կամ ոչ
առնել:

Խիղճ մտայն է, օրէնք իմացակա
նիա մերոյ:

Խ՝, ամուսն է, մերձաւորութիւն
անձանց 'ի մարմնաւորութենէ
Ժողովեալ պակաս յ'ամենայն արիւ
նակցութենէ:

Խ՝ կուսն է՝ հաւաքեալ խորհուրդ
առ'ի որոնել զճանաչելիսն:

Խոհեմութի է՝ ուղիղ առնելեացն:

Խոհեմութիւն է՝ գիտել զինչ հո
գին սրտաբառնել:

Խոհեմութի է՝ ճանաչումն խառն
լեացն՝ և յօժարելեացն:

Խոհեմութիւն է՝ գիտութիւն չա
րեաց՝ և բարեաց, սիրելով զմիսն,
և խորշելով 'ի միւսոյն:

Խոհեմութիւն է՝ ուղղութիւն բա
նին, որ մնայ 'ի գործօղն:

Խոհեմութիւն է՝ ընտրութիւն բա
րւոյ՝ և չարի, և որոց ոչ չարէ՝ և
ոչ

նչ բարի ըստ ինքեան:

Խոհեմութի է ճանաչումն Վճայ
ին՝ և մարդկային իրողութեանց
ուղղութիւն բարի կենաց:

Խոհեմութիւն է առաքինութիւն
ըստ քաղաքականին՝ որ ըստ կանոնի
բնականին խորհի ուղղել զնամ, զոր
ինչ առնէ, և ոչինչ քան զուղիղն կա
մի առնել:

Խոհեմութիւն է ըստ մաքրողակա
նին զաշխարհս՝ և զնամ որինչ յաշ
խարհի է՝ խոտել Վճայնոյն խոկ
մամբ՝ և զամենայն ճանաչումն հո
գւոյն միայն ունիլ յՎճայինսն:

Խոհեմութիւն է ըստ մաքրեալ հո
գւոյն միայն զՎճայինսն ճանաչել,
և այնպէս յայնս՝ իբրեւ նչ գուցէ
այլ ինչ:

Խոհեմութիւն է ըստ նախադադա
մարականին նոյն ինքն միտք Վճայ
ինք՝ որում նամ ինչ է՝ մերկաստորա
նոյ՝ և բայ:

Խոհարհութի է, ինկատմանէ իւ
րոյ տկարութեանն՝ կարողութեան,
և սրբութե, կամաւոր խոհարհումն
մտաց առաջի ստեղծողին իւրոյ:

Խոհարհութի է կորացումն, կամ ի
ծունկս

Ժուռնկս իջումն իմն մտայն առաջի
 Այ միշտ պատուէլով՝ և երկնչե
 րով՝ ի նմանէ:

Խոնարհութի է՝ սէր կալոյ՝ ի կարգն՝
 որ ինքեան պատշաճի, զի մի կամես
 ցի մարդն նախագահ լինիլ, այլ
 հնազանդիլ ում պարտէ՝ և որսիս
 պարտի:

Խոնարհութիւն է՝ առաքինութի,
 որով մարդն ճշմարտադոյն ճանաչ
 մամբն իւրով ինքեան անարդ երևի:
 Խոնարհութիւն է՝ ճանաչումն տկա
 րութե՝ և նանրութեան իւրոյ:

Խոստովանութիւն է, որով Թաքու
 ցեալ հիւանդութիւնն յայտնի յու
 սով Թողութեանն:

Խոտումն է, փոքրադոյն մեծարանք
 իրին քան զարժանն:

Խոտումն է՝ քամահումն իրի իւր
 զանարդ իմն:

Խոտումն է՝ հեղգաբար առնել
 զառնելիսն:

Խորհուրդ է՝ անտեսանելի շնորհաց
 անտանելի կերպ:

Խորհուրդ է՝ յոր ընդ ծածկութիւ
 երևելի իրաց՝ ծային զօրութիւնն
 ծածկապէս ներդործէ զփրկութի:

Խոր

Խորհուրդ է նիւթական տարր տր
տաքնւտ ենթադրեալ աչաց ըստ
կացուցման նշանական, և ընմանու
թեան ցուցական, և ըստ սորա բա
րերարութեանն աներևոյթ իմն
չնորհայն տոճողական:

Խրատ է՝ բան բացասութեամբ
գլխաճորեալ յորդորել յ'ինչ,
և կամ հրաժարեցուցանելով:

Խրատ է խորհեալ բան առնել
ինչ կամաւ:

Խրատ է նրբահայեցութիւն մտաց,
առ'ի քննել և կարգաճորել զիրս
առ վախճանն:

Խրատ է յիշեցումն Վճային կամայն
վասն բարձրագոյն իրաց:

Խրատ է Վճային լուսաճորութի, և
պարզ և առ'ի յայտնել զկամս նր:

Խրատ է բարի և համեատ կենցա
ղավարութիւն, որում ոչ է բաճա
կան չար ոչ առնել, այլ ջանալ
յ'այնս զոր բարեպէս առնէ՝ անմե
ղադրելիս երևիլ:

Խրատ է՝ կամք խրատելոյ զսխա
լեալն:

Խրատ է կարգաճորեալ ուղղութի
բարուց, և պահպանութիւն կանո
նաց

նաց մեծագունից, և յառաջընթաց
ցելոց հարց:

Խրատ է՝ կարգաւոր շարժութիւն
ամանդամոց, և պատշաճաւոր կար
գաւորութիւն ամենայն ունակցու
թեանց՝ և գործոց:

Խրատ է, որ ընդդէմ հրամանին
յիշեցումն. լաւագոյն բարւոյն. ու
րում ոչեմք պարտական:

Օ՝ Լրաւ է՝ ախորժակ ցրտոյն՝
և գիջին:

Օ՝ Նունդ է՝ փոփոխումն ինչ յ' ոչ
էութեանէն յ' էութի:

Օ՝ Ուլութիւն է՝ տրտմութիւն
ծնեալ ՚ի շփոթմանէ մտայն.
և կամ ձանձրութի՛ւն և դառնութի՛ւն
հոգւոյ, որով շիջանի հոգւոր զու
արձութիւնն:

Օ՝ Ուլութիւն է՝ ձանձրութի՛ւն ներ
քին բարւոյն:

Օ՝ Ուլութիւն է, թաղխճումն ամբո
խեալ մտաց, վասն ունայնացելոյն
իրաց, և վ'ս ցանկութե՛ մարմնոյն:

Օ՝ Ուլութիւն է՝ յամբութիւն հո
գւոյ, որով հեղգանայ սկսանիլ զբա
րին, կամ զսկսեալն ձանձրանայ կա
տարել:

Օ՝ ու

Սուրբ Թի է՛ խեղաթիւր անկումն
կրկին մարդոյն, 'ի գուլեւ 'ի վարժ
մանէ առաքինութեան:

Ս'րդ է՛ առ իրեարս համաձայ
նութիւն հաւասարիցն՝ և ան
հաւասարիցն, տալով իւրաքանչիւր
ուսեք զիւրն տեղի:

Ս'րդ է՛ նշան իմն, յ'որ աւանդի կ'ը
գեցելոյն հոգեւոր իշխանութիւն՝ և
գործաւորութիւն:

Սարկամութիւն է՛ յ'անպատշաճ, և
յանխորհելի մտաց խստութիւն. և
ոչ կամելով տեղի տալ լաւագունի:

Ս'ղծաւորութի է՛ գաղտ յօժա
րութի արտափայլելոյ, կամ ցու
ցումն բարւոյն՝ յ'որ կարօտանայ:

Ս'նիք է՛ նշան հաղորդութի Ս'ծ
ութեանն, և ս'ք կարգի հաւա
տացելոց տուեալ մերձեցելոց յ'Ս'
տուծոյ երանութենէն:

Ս'նիք է՛ զանազանութի 'ի յաւիտե
նական կնքոյն եղեալ բանական հո
գւոյն ը պատկերի, կերպակցեցու
ցանել զՍ'րրորդութիւնն ստեղ
ծեալ անստեղծ Ս'րրորդութեանն՝
և կրկնապատեղծողին որոշել յ'ան
կեր

կերպակցելոյն ըստ հաճատոյն կա
տարելութեան:

Ստութիւն է մշտնջենաճոր խո-
կումն անասականութեան
յասականացու մարմինս:

Սիւ է շարժումն բարկութեան՝
եղեալ ՚ի տարաձայնութենէ:

Սօնաճորութիւն է վերստին
կապ հոգւոյ մերոց առ ՚ի ծառայ
ել միոյն Նստութոյ:

Նմբերութի է կամաճոր՝ և
հանապազորդ տեւողութիւն
մեծամեծ՝ և ահաճոր իրաց. սլառ
ճառ համեստութե՝ և օգտութե:
Համբերութի է օտար չարին հան-
դարա մտօք համբերել, և ընդդէմ
չարչարողին՝ ոչինչ կերպիւ յխակալ
լինիլ:

Համբերութիւն է նմ չարչարող
կրից արտաքուստ ՚ի վերայ եկելոյ
յաղթութեամբ տեւողութի:

Համեստութի է սուսքինութի, ո-
րով ամօթխածութիւն ոտանայ ին-
քեան մաքուր՝ և կայուն արժանաւ
որութիւն:

Հայհոյութի է համարել Ն. Եղոր-
ինչ ոչ է նր:

Հայ

Հայհոյութիւն է՝ բան արտաբե-
րեալ՝ի նախատինս Վ.Ե.

Հանձար է՝ շնորհ իմանալոյ զփրկա-
կան նշանակութիւնս բնական՝
կամ կացուցեալ նշանաց:

Հաւատ է՝ գոյացութիւն յուսացե-
լոյ իրաց՝ և յանդիմանութիւն, ո-
րոց ո՛չն երեւին:

Հաւատ է՝ մնացական տեղակալու-
թի հաւատացելոյ, որ տեղակալէ՝
զարդարան՝ի ճշմարտութիւնն, և
զճշմարտութիւնն՝ի նոսա:

Հաւատ է՝ լուսաւորութիւն մտաց
եղեալ յ'առաջին լուսոյն առ՝ի տե-
տանել զհոգևոր բարիս:

Հաւատ է՝ խորհիլ հաւաքաբանութե-
զայնտսիկ, որք վերաբերին առ քրիս-
տոնեական կրօնս:

Հաւատարմութիւն է՝ պահպանու-
թիւն բանից՝ և դաշանց:

Հաւաքաբանութիւն է՝ բան՝ յորա-
ոմանց եղելոյ, և հաւանելոյ՝ այլ իր-
ինչ յ'այնցանէ՝ որք եղեւ են՝ի հար-
կէ պատահի այնոքիւք, որք եղեալ
և հաւանեալք են:

Ի՞նչ է՝ որ ո՛չ կրէ, և ո՛չ քարչի:
Հեղութի է՝ բարեբարոյութի
հո

հոգւոյ՝ որ ոչ գրգռէ, և ոչ գրգռի,
 ոչ վնասի՝ և ոչ վնասել խորհի:
 Հեղուծի է՝ կատարելութիւն՝ կամ
 քաղցրութիւն, որ տայ անդի ջարին՝
 և գիտէ հնազանդիլ մեծագունին,
 և ոչ ընդ գիմանալ չարացն՝ և հաւ
 անի բարեացն:

Հեղուծի է՝ հանդարտութիւն համեստ
 հոգւոյ, որ ոչ իւրիք ամբոխամբ
 դիպունձոց շարժեալ լինի:

Հեղուծի է՝ քաղցրութիւն հոգւոյ,
 զոր ոչ յաղծէ՝ դառնութիւնն:

Ինչպէս զհեղուծի է՝ թմրութիւն մտայ,
 որով ոք լինի անփոյթ՝ ի կատա
 րել զորինչ պարտի:

Հերձոնձ է՝ արանց գիտնոց կար
 ծիք առ ինքեանս ձայնակցելոց, և
 առ այլս տարաձայնեցելոց:

Ինչպէս զհեղուծի է՝ կամք առնե
 լոյ զհրամանս մեծագունին:

Հնազանդութիւն է՝ պատշաճաւոր
 լսողութիւն, որ ըստ կանոնաց Եւ
 գրոց, և ըստ կացույման եկեղեցւոյ՝
 զոր պարտիմք մեծագունին:

Հնազանդութիւն է՝ սուրբ ջանք
 ուրացումն յատուկ կամայն:

Հնչումն է՝ յայն՝ որ յատուկ, և ըստ
 2 ք ինքեան

ինքեան լսելեօք ընդունի:

Նողի է գոյացութիւն անմարմին,
իմացական ընդունօղ լուսաւո
րութեան վերջին՝ առ ընչութեամբ
յառաջնոյն:

Նողի է գոյացութիւն անմարմին,
կառավարիչ մարմնոյն:

Նողի է ներգործութիւն բնական,
և գործիական մարմնոյն զօրութիւն
կենդանութիւն ունողի:

Նողի է նմանութիւն ամենեցուն:

Նողի է լծակերպ շունչ կենաց:

Նողի է գոյացութիւն իմացական
կարգել յ'երանութիւն յ'ինքենէ,
և ի մարմնումն:

Նողի է կատարօնութիւն մարմնոյ
բնական գործիաւորեալ, զօրութիւն
կենդանութիւն առնողի:

Նարտութիւն է յօժարութիւն
թիւր գերազանցութեան:

Նարտութիւն է ախտ զայրացել
և ուռուցեալ փքով:

Նրաման է, որ ոչ հնազանդիւն է
մեղք:

Նրեշտակ է իմացական գոյացութիւն
մշտաշարժ կամօք, անձն իշխան, ան
մարմին Ն. Ե սպասաւոր անմահ:

ՉԻ՛յն է, հնչումն ելեալ 'ի բե
րանոյ կենդանւոյ բնական
դործեօք ձեալեալ առ 'ի գոյացու
ցանել զձայն:

Չանձրութի է՛ լքումն անձին:

Ո՛ր մարտութիւն է՛ հաւատա
րութի իրին առ իմացման:
Ղմարտի է՛ գոլն՝ որ է, և ո՛չ գոլն
որ ո՛չ է:

Ղմարտութի է՛ ծայրագոյն նմա
նութեան սկզբանն:

Ղմարտութի է՛ ուղղութիւն, որ
միայն մտօք իմացեալ լինի

Ղմարտութիւն է՛ առաքինութի,
որով ցուցանին՝ կամասին առանց
փոփոխման այնք, որ էին, են՝ և լի
նեւոյ են:

ՍԻ՛րմին է՛ 'ի տեղւոջ սրարա
գրաբար, և սահմանապէս:

Սաքառումն է՛ յանկարծ ջրէն շարժ
մամբ հակաճառել ընդդիմադը
րեալ ճառիցն:

Սեղք է՛ յետս դարձումն յանփո
փոխ բարւոյն, և դարձումն 'ի
փոփոխական բարին:

Սեղք

Մեղք է՝ գործ անկարգ :

Մեղք է՝ արժանաւորութիւն պատ
ժոյ :

Մեղք է՝ ապականութե տեսակին՝
եղանակին, և կարգին, որք են յիւ
րաքանչիւր ստեղծուածս :

Մեղք է՝ յանցումն Վճային օրի
նացն, և անհնազանդութի Վճայ
ին պատուիրանայն :

Մեղք է՝ զրկումն Վճային օրի
նացն, և անհնազանդութիւն երկ
նային պատուիրանայն :

Մեղք է՝ կամք պահելոյ՝ կամ հոս
սանելոյ այնմ, զոր արդարութիւն
արգելու :

Մեղք է՝ ասացեալն՝ արարեալն, և
ցանկացեալն ընդդէմ Վստուած
ային օրինայն :

Մեղք է՝ ստուենկանումն Վճային
օրինայն, և անհաղորդութիւն երկ
նային հրամանայն :

Մեղք է՝ ցանկալ՝ զորս խոտեաց
Քս, և փախչիլ յորոյ նայն համբե
րեաց :

Մեղանչելն է՝ արհամարհելովն զան
փոփոխ բարին, յարիլ փոփոխա
կանայ իրողութեանց :

Մե

Ս'եղադրութիւն է՝ անարատշաճ՝ 'ի
կիրառնումն անձն իշխանութեանն
յառնել ինչ՝ կամ զանցառնել:

Ս'եղկութիւն է՝ ոչ տանել խստա-
գոյն իրաց:

Ս'եղկ է՝ սր ոչ տանի խոշորութեանց, և ոչ ձեռն արկէ՝ 'ի բարձրագոյնս՝ և՛ ի դժուարինս, այլ փախ-
չի և տայ տեղի իւրաքանչիւր ներ-
հակի:

Ս'եծասրտութիւն է՝ բանաւոր՝ և
յօժարական արձակումն յ'ահար-
կուս՝ և՛ ի դժուարինս:

Ս'եծագործութիւն է՝ սկսումն՝ և
կատարումն դժուարին, և սլայծառ
իրողութեանց:

Ս'եծագործութիւն է՝ ընդ արձակ՝ և
սլայծառագոյն խորհուրդ սրտի հին
դերձ կատարմամբ մեծամեծաց, և
վեհագունից իրողութեց:

Ս'կրտութիւն է՝ լուացումն ար-
տաքին մարմնոյ. եղեղ՝ ի ներքոյ
բացորոշեալ ձեռն բանից:

Ս'կրտութիւն է՝ ջուր՝ լուացող մե-
ղաց, և սրբող բանիւն Մ. Ե.

Ս'կրտութիւն է՝ որով զառհաւատ
չեայ հոգւոյն Սրբոյ առնուիք.

և սկիզբն այլ կենաց լինի 'ի մեզ՝
վերապին ծնունդ՝ կնիք պահպա-
նութեան, և լուսաւորութիւն:

Սկրտութիւն է՝ սկիզբն սրբաղնա-
գունից պատուիրանաց սուրբ դոր
ծոյն՝ և այլոց Վճային պատուիրա-
նացն ընդունողութիւն զկարողու-
թիւն, կատարել զմեր շնչաւոր ու-
նակութիւն, և 'ի վերին կենայն հան-
գիստ ճանապարհակից մեզ լինիլ:
Սկրտութիւն է՝ լուսացումն 'ի ջուր՝
սրբեալ բանիւ կենաց, այսինքն
կոչմամբ Արրորդութեն:

ՍԱլորութիւն է՝ ապականութիւն
բնական բարեացն:

Յնչանք է՝ ոչ առնել զհրա-
մայեալն:

Յանդրգնութիւն է՝ զգործս՝ և զա-
սացուածս այլոց իւրացուցանել:

Յատկացումն է՝ առանձնական իմն
վերբերութիւն, վասն հոմանունութե-
լստ յատկագոյն այնմ՝ անձին:

Յարատւողութիւն է՝ հաստատուն՝
և մշտնջենաւոր կասումն 'ի բարին:

Յաւիտենականութիւն է՝ անփոփոխ
յարատւութիւն աւանց սկզբան՝ և

վախ

վախճանի. որ սլառեանի միայն Մ.
տուծոյ:

Յաւիտենականութիւն է կատարեալ
Մ. անսահմանելի կենացն բովան
դակն համանդամայն:

Յափրշտակութիւն է բռնաւոր
առումն իրաց օտարաց:

Յոյս է բաղձանք երկնային բա
րեոյն աներկբայ հասանելնմա:

Յոյս է ստոյգ ակնկալութիւն հան
դերձեալ երանութեանն յառաջ
եկեալ ի շնորհացն Մ. և ի յա
տուկ երանութեանցն:

Յոյս է ունակութիւն մտաց յղա
ցեալ յառատութենէն Մ. և նե
լոյ զկեանս յաւիտենական բարի
արդեամբք:

Յուսահատութիւն է խորտակումն
յուսոյն դառնալ անդրէն ի շնորհս:

Յուսահատութիւն է ոչ ապաստան
լինիլ յարդիւնս իւր, և ոչ յանո
խակալութիւնն Մ. տուծոյ:

Մ. խասահամանութիւն է նախա
գիտութիւն բարերարութե
ն. տուծոյ:

Մ. խասահամանութիւն է նախակար
գու

դռութիւն ուրուք առ փառս:

Նախասահմանութիւն է՝ յառաջ
դրումն ողորմելոյ:

Նախասահմանութիւն է՝ նախապատ
րաստութիւն շնորհաց ՚ի ներկայս, և
փառաց ՚ի հանդերձելումն:

Նախասահմանութիւն է՝ նախաճա
նաչումն բարեաց, հանդերձ պատ
ճառութեամբն իւրեանցն:

Նախադիտութիւն է՝ նախաճանա
չումն չարաց առանց պատճառուէն:

Նախազաղափարք էն՝ նախկին տե
սակք իրողութեանց, որք ըմբռնին
ՂՃային իմացմամբ:

Նախախնամութիւն է՝ յՂ. Ե Ես
եղեալ հպատակումն:

Նախախնամութիւն է՝ կամք Ղ. Ե, ո
րով ամենայն էքս առնուն զպա
տեհն իւրեանց ելս:

Նախատինք է՝ բանիւ՝ կամ գործով
ածել ՚ի վերայ ումք զանարդանս:

Նախատինք է՝ առնել զվրէժ ար
համարհելի բանիւք:

Նախանձ է՝ ցաւ ՚ի բարեբառառու
թենէ այլոց:

Նախանձ է՝ արտամութիւն վամբ բա
րեոյ այլոց:

Նա

Նախանձ է՝ ատելութիւն բարե-
բաստութեան այլում:

Ներկայ է՝ որ ոչ ունի մնացական
գոլ՝ այլ անցանէ:

Շորհակալութի է՝ ի միտա-
ծումն բարեկամացն, և երախ-
տեաց՝ այլոց, ունելով կամս հատու-
ցանելոյ:

Շորհակալութիւն է՝ առաքինու-
թիւն, որով երախտաւորացն մերոց
պարտիմք լինիլ շորհակալու:

Շորհակալութիւն է՝ յոր ուժ
գին յօժարութք պահէ զբարե-
կամութիւնն առողին, և տուողին
առ միմեանս:

Շուքութիւն է՝ աստկանութիւն
զուգակցան հաւատոյն:

Փոթումն է՝ մարմնոց շփոթա-
կանաց այլայլեւեաց միութի:

Ոխ է՝ անկարգ մտաց թաքու-
ցեալ դառնութիւն:

Ոխ է՝ հնացեալ բարկութի:

Որմութի է՝ առաքինութի, որ-
ով շարժի հոգին ի վր թշուա-
ռութեամբ նեղելոցն:

Ողորմութիւն է ախորժակ ցաւակիոյ
հոգւոյ՝ հանդերձ բարերարութիւն։

Ողորմութիւն է անոխակալ՝ և հաւ
ասար ներումն՝ ի վերայ ամենե
ցուն, և՛ ի նեղեալսն ցաւակիոյ ոգւոյ
խոկումն։

Ողորմութիւն է տրտմութիւն առ
այլոյ չարս։

Ողորմութիւն է՝ որով երկրաւորքս
չահեն զերկնաւորսն։

Ողջախոհութիւն է աիրել բանա
կանին՝ ի վերայ գէջ ցանկութեցն,
և՛ ի վերայ սյլ անյուշղայ յ'արձակ
մանցն։

Ողջախոհութիւն է՝ ոչ ումեք՝ ի զղջա
լեացն ցանկալ՝ և ոչ իմիք անցա
նել յ'օրինաց համեստութենէ, և
՛ի ներքոյ լծոյ բանականին նուա
ճել զցանկութիւնն։

Ողջախոհութիւն է՝ ունակութի,
որ արգելու զյօժարութի յայնցա
նէ, որ գարշութի ցանկացեալ լինին։

Ողջախոհութիւն է առաքինութի
ըստ քաղաքականին, ոչինչ ցանկալ
զղջալեացն, ոչինչ իրօք անցանել
զօրինօքն, այլ ընդ լծով բանակա
նութեն նուաճել զցանկութիւն։

Ողջախոհութիւն է՝ ըստ մաքրողա-
կանին թողուլ զամ, զորինչ՝ ի սկստ
մարմնոյն սլահանջի՝ ո՛րքան տեւէ
բնութիւնն ։

Ողջախոհութիւն է՝ ըստ մաքրեալ հո-
գւոյն զերկրաւոր ագահութիւն ո՛չ
տանձահարել՝ այլ ամենեւին հեռա-
նալ ։

Ողջախոհութիւն է՝ ըստ նախագա-
ղափարականին, կենցաղավարուի
իմն յինքեան յաւիտենական դի-
տաւորութեամբ ։

Որկրամոլութիւն է՝ անկարգ ցան-
կութիւն ուտելոյ ։

Որկրամոլութիւն է՝ անկարգ սէր հեշ-
տութե ըստ ճաշակելեացն ։

Որկրամոլութիւն է՝ իւրաքան-
չիւր կերակրով ընուլ զլայնաբաց
ցանկութիւն կոկորդին ։

Որկրամոլութիւն է՝ յօժարութիւն վեր-
երեւոյթ բարւոյն ընդ պատրուա-
կաւ կազդուրողին ։

Որկրամոլութիւն է՝ կլանող ուսման,
ո՛չ հաւանեալ կոսարաց բնութեն ։

Ոկրաժետութիւն է՝ անկարգ ցան-
կութիւն յ'առնուլն զկերակուրն՝
կամ զըմսելին ։

Որոտումն է՝ ճայն՝ շարակցեալ ամ
սոյն :

Որոտումն է՝ շիջումն հրոյ յ'աման :

Ուղղութի է՝ յառաջ եկեալ պատ
ճառաց համահաւասարութիւն
արդարութիւն :

Ուղղութիւն է՝ արժանաւոր հատու
ցումն վարձուց, ինչ անսխալ կշռոյ
բանասկանութեանն :

Ուղղութի է՝ սէր հաւասարութե
յ'այնս, յ'որս պարտի լինիլ հաւա
սարութիւն :

Ուռուցումն մտայն է՝ կամք առնլոյ
վրէժ, վասն անիրաւութեանցն, որ
ընդդէմ ինքեանն :

Չէր է՝ պակասութի բարւոյ,
կամ յետս դարձումն յ'անփո
փոխելի բարւոյն :

Չարակամութիւն է՝ չար կամք մար
դոյ, յորժամ ոչ կարէ ունիլ այլ ինչ
Չարութի է՝ նիւթել ումեք զչարիս :

Պէ՛հ է՝ առաքինութիւն ար
դելման, և պարկեշտութիւն
կերակրոյ :

Պաշտօն է՝ պատկառանք, և ծառայ

ութիւն մատուցեալ Ղ. Ժում:

Պաշտօն է ծայրագոյն սրատիւ, որ
միայն Ղ. Ե վայելէ:

Պատահումն է՝ իր ունող էութեան,
որ բնաւորեալ է յ'այլու՝ լինիլ:

Պատուասիրութիւն է՝ մոլեգին աշխորթակ մեծութե՝ կամ սրատունոյ:

Պատուիրան է՝ հրաման առնելոյ
ինչ, կամ ոչ առնելոյ:

Պատիւ՝ ե մեծարանք է առաքինութիւն,
որ տայ զսլառչաճաւոր սրատիւն
համեստ անձանց, կամ բարձրացելոյ
'ինախաղահութի իմն:

Պարսաւ է բան արտաբերական է
ից չարաց՝ հակառակ գովութեան
լեալ:

Պարծո՛ւմն է՝ խանչումն մտաց խոստանալով
յ'ինքենէ, զորինչ ունի:

Եւ կամ, յ'այնմանէ, զոր ունի իբր
թէ ունիցի յ'ինքենէ:

ՊՈւնկութիւն է բղջախոհական
խառնակումն, ազատ ընդ ազատին՝
եթէ իցէ բո՛ղ, եթէ այրի, և
եթէ հարձ:

ՊՍակ է արդար զուգակցութիւն
արուի՝ և իդի, ունելով անբաժանելի
կենցաղավարութիւն:

Սէրէ վախճանս պատուհիրանց.
 'ի սէ սրտէ՝ 'ի բարի խղճէ
 մտաց՝ և յ'անկեղծաւոր հաւասոյ:
 Սէրէ սիրելութիւն, որով սիրէ
 զԼ'ճ վասն ինքեան, և ընկերն վ'ա
 Լ'ստուծոյ՝ և յ'Լ'ճ:

Սէրէ կեանք, որ միաւորէ զսիրօղն
 ընդ սիրեցելոյն:

Սէրէ առաքինութեան, որով ցան
 կամք տեսանել զԼ'ստուած՝ և
 զմայլիլ 'ի նմա:

Սէրէ առաքինուէ, որով ախորժակ
 մերոյս հոգւոյ ամենեւինէ ուղիղ:

Սէրէ ուղղագոյն ախորժակ մտաց
 մերոյ:

Սէրէ՝ համաձայնութիւն մտաց ըն
 կերակցութիւն ընտրելոց, և երա
 նելի կեանք հոգւոյ՝ և հրեշտակաց:

Սէրէ ունիլ բարի կամս առ Լ'ճ
 վասն ինքեան, և առ ընկերն յ'Լ'ճ
 վասն Լ'Յ:

Սէրէ՝ ունիլ կամք բարի առ ամե
 նեսեան:

Սէրէ առաքինութի՝ որ յատուկ
 միայնէ արդարոց՝ և որդւոց Լ'Յ:

Սէրէ՝ ունակութի առաքինութե
 'ի հոգին, որով սիրեմք զԼ'ճ:

Սէ

Սիրելուծիւն է՝ սիրել զսիրելին
վո՞ սիրելւոյն, և ո՞չ վո՞ ինքեան:
Սիմոնականութիւն է՝ յօժարական
կամք գնելոյ, կամ վաճառելոյ զհո
գւորն, կամ կասկածեալն ընդ հո
գւորին:

Սւափառութիւն է՝ յօժարութի
մարդկային գովութեան:

Սուգ է՝ շնորհք սաստկապէս ցաւե
լոյ պատահեալ չարին, և պակա
սեալ բարւոյն:

Սուգ է՝ դառնութիւն ոգւոյ վառն
անկա՛ր գոլոյն առնլոյ վրէժ՝ ի չա
րէն. և յ՛որմէ ո՞չ կարէ առնուլ
վրէժ ջանայ լալով փոխարէնս մա
տուցանել:

Սուրբ է՝ նոյն ինքն մաքուր՝ կամ
հաստատ, կամ թարց հողոյ:

Սուտ է՝ գոլն որ ո՞չ է, և ո՞չ գոլն՝ որ է:

Ստութիւն է՝ սուտ նշանակութի
ձայնի դիտաւորութիւն պատրելոյ:

Ստութիւն է՝ պատրուակումն ճշմի
տութեանն բանիւ, կամ գործով.
կամ պատրողական շարժմամբ:

Սրտամտութիւն է՝ հնացեալ ժանտ
հոգւոյ ընդդէմ ումեք:

Սրբութիւն է՝ ամբողջութիւն եր
կո

Կոյուենց մարդոյն պահել վասն սի
րոյն Լստուծոյ:

Սրբութիւնէ՛ մաքրութի՛ հոգւոյն՝
դարչելով յամ՝ զազրութենէ:

Սրբութիւն է՝ յամենայն պղծու
թենէ ազատ՝ և կատարեալ, և ա-
մենեւին անբիծ մաքրութիւնն:

ՍԻ՛ անչելի է՝ որ երևի բարձրա
գոյն, և անսովոր. ՚ի վեր քան
զայս, և զկարողութի իմացելոյն:

ՍԼ՛ շէ է՝ փոխատուութի ար
ծաթոյ վճ գարչելի շահից:

ՍԼԷ՛ խ է՝ առնուլ աւելի ինչ՝ քան
զոր եան փոխ

ՍԼԶ՛ շէ է՝ պահանջել շահ, վասն
փոխատուութեանն:

ՏԼԷ՛ր է՝ յառաջինն բաղադրե-
լեաց, և ոչ բաղադրեալ:

Տարբեղէն է, իւրաքանչիւր մարմին
բաղադրեալ ՚ի չորից տարերց:

Տարաձայնութիւն է՝ յորժամ քա-
մահէ ոք՝ համայձայնիլ այլոց զի
ինքն երևեսցի մեծ:

Տարաձայնութիւն է՝ անհաւանու
թիւն բարեկամացն ընդ միմեանս:

Տա

Տատամնուամն մտացն է՝ զբաղումն
սիրոյ առ անարժանս:

Տարալծորդութիւն է՝ անշարայա-
րութիւն մտաց, որով բոլորովն
թողեալ լինի սկսեալ բարին:

Տարտամութիւն է՝ անշարայարու-
թիւն հոգւոյն, որ առաւել կամի ոք
կեալ թշուառութե՛ք՝ և չքաւորութե՛ք
քան վասն հարկաւոր սիրոյ
իցն սակաւ մի աշխատանաց տանիլ:

Տգիտութիւն է՝ պակասութիւն
գիտութե՛ք՝ զոր սլարտի ունիլ:

Տկսութիւն է՝ ճշմարիտ՝ և ոտոյգ
նկատումն մտաց, վասն իւրաքան
չիւր իրի:

Տեսութիւն է՝ անտարակոյս ըմբռ-
նումն իրին:

Տլ՛ է՝ յարեգակնէ լուսաւո-
րեալ՝ ի վերայ երկրի:

Տուն է՝ ի քարէ, և ի փայտէ՝ շի-
նեալ ի շինողէ, քառանկիւնի
ձեւով:

Տուն է՝ ծածկոյթ պահելով զմեզ
ի ջերմոյ, և ի ցրտոյ:

Տրամախոհութիւն է՝ զօրութիւն,
որ բաղադրէ զսպառկերս ընդ-
սպառկերի, և զսպառկերս ընդ գիւ-

տաւորութիւնս, և զդիտաւորութիւնս ընդ դիտաւորութիւնս :

Տրտմութիւնէ՛ իշփոթմանէ մտաց անկարգ դառնութիւն ոգւոյն :

Տրտմութիւնէ՛ ստորանկումն մտաց վո՛ր ի վրէկեալ ինչ պակասութե՛ :

Տրտմութիւն է՛ թաղծումն մտաց վասն ներհակաց իրաց :

Տրտունջ է՛ գանդատ սրտին, որնշանակէ զանհաճութիւն նորին :

Տրտունջ է՛ ներհակախօսութիւն ան պատշաճ, արարեալ ընդդէմ առ նելեաց Մ. Ե, կամ մարդկան :

Տրտնջականն է՛ ունակութիւն իմն հարողական իմացմանն :

Տրտնջականն է՛ շարժողական զօրութիւն հոգւոյն, որ միշտ բնաւորելէ՛ կառակցիլ ի վերնագոյնսն :

ՅԱնկութիւ մարմնոյ է՛ նմ տեւ չումն, որ վերաբերի առ հեշտութիւն մարմնոյն :

Յանկութիւ աչաց է՛ բաղձանք ամենայնի, զոր ինչ տեսանէ աչօք :

ՓԱփօխումն է՛, այլ կերպ ունիլ յայնժամ քան այժմ :

ԲԼ զց արդարութեանն է՝ սաս
տիկ տենչումն արդարու
թեանն, կամ ծայրագոյն բարւոյն։
Բազց է ախորժակ ջերմին, և չո
րոյն։

Բաջութիւն է՝ հաստատութիւն
մտաց անխախտ, և յարամնայ՝ ի յօ
ժարութիւնն։

ԲԼ ափութիւն է՝ բեռն ծանրա
գոյն, և կապ նեղագոյն. թշուառա
պէս ընկճելով զհոգի՝ և զմարմին,
զգգաստութիւն, և զբան. զի մի առ
նուցու ի կիր զիւրոցն գործս։

ԲՈւն է՝ անկարութի զգօնութե՝
վս առաւելութեան հսկմանց։

Բուն է՝ հանգիստ շնչական զօրու
թեանց, որով յառաջանան բնա
կան զօրութիւնքն։

Բուն է՝ դարձումն շնչոյն արտա
քուստ ի ներքս։

Բուն է՝ հանգիստ շնչական զօրու
թեց ընդ սաստկանալ բնականին։

Բուն է՝ պատկեր մահու, և ծնա
նի ի ծուլութենէ։

ԲՍութիւն է՝ դադար խօսիլ չար
զընկերէն։

Ընկառուելի յաղագիս Ընառնեմէն, և
 Չարութեց. ըստ հորի՝ է բռն Յոյն օրինա
 քէ Գաղափարեալ՝ և հարգարդեցեալ յ'ոմեմ
 նէ ապիկար դարէ Ընանդեցոյց:

Ըրդարե գովելի են գեղեցիկքն,
 և պարսաւելի գարշելիքն. քան
 զի՝ գեղեցկացն յառաջեալ լինին
 առաքինութիւնքն, և գարշելեացն՝
 չարութիւնքն:

Ըյլև՝ գովելի են և պարտճառք ա
 ռաքինութեանցն, և հետեւեալքն
 առաքինութեց, և լեալքն՝ ի նոցունց,
 և գործք նոցունց. բայց՝ պարսաւե
 լիք, որ ներհակք են:

Ըրդ՝ եռամասնեայ հոգւոյն առ
 նլով, (ըստ Պղադոնի հարծեայն) Բա
 նականին առաքինութիւն է խոհեմութիւնն.
 իսկ Յամմատեսակին՝ հե
 ղութիւն, և արիութիւն. այլ՝ Յան
 կականին՝ ողջախոհութիւն, և ժուժ
 կալութիւնն. բայց՝ բոլոր անձիւնն
 (հոգւոյն), արդարութիւնն, ազա
 տականութիւն, և մեծահոգութիւն.
 Իսկ չարութիւն Բանականին է ան
 զգայութիւն (անմտութիւն). և Յա
 մմատեսակին՝ բարկացողութիւնն,
 և զանդիտութիւն. իսկ Յանկականին՝
 զեղ

դէղխութիւն, և շուայլութիւն . բայց՝
բոլոր հողւոյն՝ անիրաւութիւն, ան
ազատականութիւնն, և փոքրահո
գութիւնն :

Սահմանի լուսինութիւնն :

Լուսինութիւնն :

Լուսինութիւնն խոհեմութիւնն առա
ջինութիւն բանական հողւոյն
պատրաստական այնոցիկ, որ առ բա
րեբաստութիւն գործակից լինին :

Հեղութիւնն :

Լուսինութիւնն, կամ հանդարտութիւն
է՝ առաքինութիւն ցամառատեսակին,
ըստ որում գծուարաշարք լինին
առ բարկութիւնն :

Լուսինութիւնն :

Լուսինութիւնն է՝ առաքինութիւն
ցամառատեսակին, ըստ որում հեղ
գաղարհութիւն գծուարաշարքի լինին
յ՛երկիւղիցն, որ յաղագս մահու :

Ողջութիւնն :

Լուսինութիւնն է՝ առաքինութիւն
ցանկականին, ըստ որում ան
իղձք լինին առ վայելմունսն յուր
հեշտութեանց :

Ժողովութիւնն :

Լուսինութիւնն է՝ առաքինութիւն
Ժողովութիւնն

Թիւն ցանկականին, ըստ որում ար
գելուն մտօքն զցանկութիւնն դի
մեալ առ յոռին հեշտութիւնն :

Լ. Բարդարութիւնն :

Եւ արդարութիւն է առաքինութի
հոգւոյն՝ բաշխական ընդ թանաճո
րութեանն :

Լ. Կատարանութիւնն :

Եւ աղատականութիւն է առաքին
նութիւն հոգւոյն՝ դիւրածախ՝ ի
դեղեցիկսն :

Ս. Եծահոգութիւնն :

Իսկ մեծահոգութիւն է առաքինու
թիւն անձին, ընդ որում կարեն հան
դուրժել բարեբախտութե՝ և վա
տաբախտութեան . պատճոյ, և ան
պատճութեան :

Ս. Կհմանք Զարութեանց :

Լ. Կհմանք Զարութեանց :

Լ. Կհմանք Զարութեանց Եւ Զար
ութիւն բանականին՝ չարս
չար կելոյ պատճառ :

Լ. Կհմանք Զարութեանց :

Եւ բարկացողութիւն է չարութիւն
ցասմնատեսակին, ըստ որում դիւ
րաշարժք լինին առ բարկութիւնն :

Օ. Կհմանք

Օտնգիտութիւն :

Իսկ զանգիտութիւն է՝ չարութիւն ցաս
մնատեսակին, ըստ որում զարհու
րեալք լինին յ'երկիւղից, և մանաւ
անդ՝ որք յաղագոս մահու :

Օեղխութիւն :

Օեղխութիւն բղջախողութիւն է՝ չարու
թիւն ցանկականին, ըստ որում յօ
ժարեալք լինին առ յօռին հեշտու
թիւնսն :

Շռայլութիւն :

Շռայլութիւն անթոթկալութիւն է՝ չա
րութիւն ցանկականին, ըստ որում
յօժարեալք լինին անբանութեամբ
առ'ի ցանկութիւնն՝ վարեալ 'ի վայ
ելմունսն յօռին հեշտութեց :

Մնիրաւորութիւն :

Մնիրաւորութիւն է՝ չարութիւն հո
գւոյն, ըստ որում աղաչք լինին ա
ռաւել քան զարժանն :

Մնազատականութիւն :

Մնազատականութիւն է՝ չարութիւն
հոգւոյն, ըստ որում շահի ըղձայելք
լինին յ'ամենայն կողմանէ :

Փոքրահոգութիւն :

Փոքրահոգութիւն է՝ չարութիւն
հո

հողւոյն, ըստ որում անկարողք լինին հանդուրժել բարեբախտութեան, և վատաբախտութեան. պատճառով
և անսպասելիութեան:

Վերջոյն Լուսինայի տառն է:

Խոհեմութեան:

Խոհեմութեանն է խորհիլն, և ընտրելն զչարսն՝ և զբարին, և զամենայն ինչ՝ որ ի կենցաղումն է, հաճելի, և գարշելի. ի կիրարկանելն բարձրք զամբնաւորեալ բարութիւնսքէն ուղղապէս. նկատելն զժամանակն. հմտութեւ վարիլն բանիւ և գործով. ունիլն զփորձառութիւնսն պիտանացուացն: Իսկ յիշելն, և փորձառութիւն, և հմտութիւնն՝ կամ է՝ ի խոհեմութեն իւրաքանչիւրն ի սոցունց, կամ միւստմիջէն հետեւեալ լինի խոհեմութեն, կամ թէ՛ ի սոցունց միայն սլառճառակիցք խոհեմութեանն է իբր փորձառութիւն, և յիշումն. իսկ միայն մասունք խոհեմութեանն, քաջախոհութիւն և հմտութիւն:

Հեղուքն է:

Իսկ հեղութեանն հանդարտութեն է կարող լինիլն համբերել չափաւորամբ

ամբաստանութեանցն՝ և արհամարհանացն. և ոչ արագապէս արշաւելն առ ՚ի սրատուհաս, և ոչ դիւրաշարժ դռն առ ՚ի բարկութիւնս. այլ առանց դառնութեան բարուց՝ և առանց վիճմանց՝ դադարումն ունիլ յ'անձին, և հաստատութիւն:

Լրիւթեան:

Լրիւթեան է հեղդ գոլ առ զարհաբանսն յ'երկիւղիցն, որք մահապառնան, և վստահանալն ՚ի դժոճարին սըն, և քաջայանդուդն առ վիշտսն. և մանաւանդ յօժարիլն ՚ի մեռանիւ բարձր, քան թէ ՚ի կեան ամսութիւ, և յաղթութե սպառճառ դռն. հակառին ևս է արիւթե, վստահիլն, և ժրանալն և ցանկալն ագիանալ. և հետեւեալ լինի արիւթե քարեհանդդնութիւն, և քարեհագութի, քաջասրտութիւն, և վստահութի. նաև՝ աշխատասիրութիւն, և ժրութիւն:

Ողջախոհութեան:

Իսկ ողջախոհութեանն է՝ ոչ սխառնալ ընդ վայելուածս մարմնական հեշտութեանց. և անըղձալի համարելն զամ գարշելի հեշտութեց վայելու

եւ լուածսն. և երկնչիւն յ'իրաւի ան
երկեւանութեն. և կարգիւն 'ի կեն
ցաղումս ընդ փոքունց, նմանապէս
և ընդ մեծամեծաց. և հետեւեալ
լինի ողջախոհութեանն բարեկար
գութիւն, պարկեշտութիւն, պատ
կառութի, և զգուշութիւն:

Եւ յաւանութեան:

Եւ ժողովալութեան է՝ կարելն ար
գելուլ բանապանաւն զցանկութիւն
դիմելաւ 'ի վատթար վայելուածս,
և հեշտութիւնս. և ժրանալն, և
համբերելն բնական կարօտութե,
և տրտմութեան:

Եւ զարարութեան:

Եւ արդարութեան է՝ բաշխական
գոլն ախմ, ինչոր արժանն է. ողջ
պահելն զհայրենի սովորութիւն, և
զկանօնսն. և պահելն զդրեալ օ
րէնսն. և ճշմարտախօսելն առ իրս
տարբերս. և կալնուլն զխոտամուն
սըն: Եւ յլ է՝ առաջին իրաւն, որ է
առ ի՛ծ. երկրորդն առ դիւն. եր
րորդն՝ առ հայրենիւն, և ծնօղն.
չորրորդն՝ առ ննջեցեալն. յորս է
բարեպաշտութիւն, որ է՝ կամ մասն ար
դարութեան, կամ հետեւեալն.

Հե

Հետեի արդարութեանն՝ սրբութիւն, ճշմարտութիւն, հաւատ, և չարատեցութիւն:

Բարոյականութեան :

Բարոյականութե է յօժարատրական գոլն ընչիցն ՚ի գովելիան. և առատանլն ՚ի ծախս սրատշաճաւորս. և օգնական գոլն յ'այլ և այլ զանազանութիս. և ոչ առնուլն ինչ՝ ուստի՝ ոչ է սկսրտ. է ևս ազատական՝ և հանդերձիւքն մաքուր գոլ, և բնակութեւն. ևս՝ կազմական գոլն յ'առաւելն, և ՚ի գեղեցիկան, և որք վայելչականութիւն իմն ունին առանց ինքեան իմիք օգտութե. և սնուցանողական գոլն կենդանեաց, որք յատուկ ինչ՝ կամ սքանչանալի ունին: Բա հետեւեալ լինի ազատականութեանն բարուց գիջութի, և բարեբարութի, մարդասիրութի, և ողորմած գոլն, բարեկամասէր, հիւրասէր, և գեղեցկասէր:

Եւ ծախսութեան :

Իսկ մեծահոգութե կամ քոջան հոգութե է բարձր բերելն բարեբախտութե, և վատաբախտութե. սրտով՝ և անսրտովութե. և ոչ զարմանալն լիփալի

օրափկութիւն, և ոչ ընդ սարսաւնո
րութիւն, ոչ լէ իշխանութի. և ոչ
ընդ յաղթութիւնս մարտիցն. այլ՝
ունիլն ինչ խորութիւն անձին, և մե
ծութիւն. է՛ և՛ս մեծահոգին, հոմ
քաջանչն, որ զկեալն իւր յոյժ փոյթ
ոչ առնէ, զի ոչ է՛ կենսասէր, այլ՝
սլարդ դուրժ բարութն, և նահա
տակ, անիրաւի է՛ կամկար առանց
սրտուհասականութեանն: Եւ հե
տեւ ի քաջանձնութեն սլարդութի,
և ճշմարտութիւն:

Վարժ Զարութեանց:

Եւ Տարութեան:

Եւ, մտութե՛ն հոմանկ Գաճութե՛ն է՛ չա
րաջար դատելն զիրողութիւն, չա
րաջար խորհիլ՝ չարաջար խմբելն,
չարաջար՝ ի կիրարկանելն զհասեալ
բարութիւնսն, ստաբար կարծելն
յաղադս՝ որ՝ ի կենցաղումն, գեղեց
կայն, և բարեացն. և հետեւ ի անմը
տութե՛ն անուսումնութի, անհմտու
թի, շռայլութի, ձախորդութիւն՝
և անյիշողութիւն:

Բարկացողութեան:

Իսկ բարկացողութե՛ն երեք են տե
սակբ, ծայրասրտմտողութի դառ
նութիւն

նութիւն, սղերդուի՝ կամ ծանրացա-
 ցաւն. և է՛ բարկացողին ո՛չ կարելն
 բերել և ո՛չ զփոքր արհամարհանն,
 և ո՛չ զնուազութիւս. այլ՝ գոչն տան
 ջանական, և սրատուհասական, և
 դիւրաշարժ առ՛ի բարկութիւն, ՚ի
 ձեռն հանդիպեալ բանին՝ և գոր
 ծոյն. հետեւի բարկացողուն զայ
 րութի բարուցն՝ և դիւրափոփոխու
 թի, և դառնաբանութիւն, և յա
 ղագս փոքունցն տրամիլ, և զայստ
 օրիկ ախտանալն փութապէս՝ և առ
 սուղ ժամանակ:

() անգիտութեան:

Իւ զանգիտութե է՛ի հանդիպել
 երկիւղիցն դիւրաշարժ գոլ՝ և մա
 նաւանդ յայնոցիկ՝ որք յաղագս մա
 հու իցեն՝ և մարմնական սրակասու
 թեանցն, և լաւ համարիլն՝ որպէսև
 իցէ՝ փրկիլն, քանթէ բարձրք վախ
 ճանիլն: Հետեւի զանգիտութեանն
 խենչութի, անարիութի՝ անաշ
 խատութի, անձնասիրութի. ունի
 ընդ ինքեամբ և խորշումն՝ և անվի
 ճաքանութիւն:

() Էղիտութեան:

Իւ զեղիտութեանէ յօժարիլն՝ ՚ի վայ
 ելու

եւլուածս փնասակար՝ և գարշելի հեշ
 տութեանցն, և կարծեւն դոլ բարե
 բաստս՝ մանաւանդ զայնսլիսի հեշ
 տութք կեցեալն, և ծիծաղասէր
 գոն՝ և ծաղրասէրն, և կատակեր
 դասէրն, և բանիւք՝ և գործովք
 դիւրագործող գոն: Եւ հետեւիւ
 լինի զեղխութեանն անկարգութի,
 անսպտիկութի՝ անպարկեշտութի,
 փափկութի՝ պղերգութիւն, անհո
 գութի, արհամարհանք՝ և լքումն:

Շաղկապութեան:

Շաղկապութեան՝ կամ Բղջիկահոտ գործ
 է յօժարիլն՝ արդելով բանականին
 ՚ի վայելուածս հեշտութեց, և կար
 ծեւն լաւագոյնսն՝ զոչ հաղորդիլն
 այնսլիսեացն, սակայն հաղորդիլն
 ոչինչ նուազ. իսկ և կարծեւն՝ պարտ
 գոլ գործել զբարիսն՝ և զպատշա
 ճաւորն, բայց՝ վն հեշտութեանցն,
 ՚ի բացկալ յայնսլիսեացն: Հետեւի
 շաղկապութեանն խենչուի՝ զըղջու
 թիւն՝ և յոլովքն այնոքիկ՝ որք և
 զեղխութեանն հետեւին:

Լնիւրաւորութեան:

Եւ անիրաւութեանն են երեք տե
 սակք՝ ամբարշտութի, ազատութի
 և

և ամբարտաճանու թիւն, համ անար
գանք. լինի ամբարտաճան թիւն՝ սխա
լելովն առ ՄԺ՝ և առ դիսն, առ հան
դուցեալն, առ ծնօղն՝ և առ հայ
րենիսն. ազահու թիւնն է՝ առ վա
ճառսն, առ աճել քան զարժանսն յօ
ժարիլն շահիլ. իսկ ամբարտաճա
նու թիւնն, ըստ որում զհեշտու թիւ
ինքեաց կաղմելով՝ զայլս՝ ի նախա
տանո հասուցանեն. ուստի Նճինոս
յաղագոս ամբարտաճանու թեանն
ասաց:

Որ ենքեան ինչ ոչ շահի, ասեցն անիդաճառ
լեան

Եւ է անօրէնու թեանն զանցանելն զհայ
րենի սովորու թեամբն՝ և զօրինականացն.
անհաճանիլն օրինաց՝ և իշխանաց. ստելն,
երդմահարիլն, զանցանելն զխոտամամբն,
և զհաճատարմու թեամբն: Հետեւի անի
րաճու թեանն զսպարաւու թիւն, ամբարհաճա
ճու թիւն, կեղծաճօրեալ մարդասիրու թիւ,
չարաբարու թիւն, և խորագիտու թիւն:

Ասաղապարհանութեան:

Մի, աղատականու թեանն են ևս երեք տե
սակք, դարշաշահու թիւն, համ զօլափաղա
թիւն, ժլատու թիւն, և անհաղորդու թիւն.
արդ՝ զօլաքաղու թիւնն՝ ըստ որում յամե
նայն շահիլն խնդրէ, առ աճելագոյն զշահան
համարի, քան թէ զամօթսն. ժլատու թիւնն
է՝ ըստ որում ընչիւք ի սլառշաճն անծա
խօղք լինին. իսկ անհաղորդու թիւն է՝ ըստ
որում ծախեն արդարեւ՝ բայց ստիպւա՝ և չո

բաշար, և առաւել փնտտեալ ընկն. զի ոչ
 ըստ ժամուն առնեն զծախսն: Եւ է անաղա
 տականութեանն՝ յոյժ փոյթ առնելն ընչեց,
 և ոչինչ նախատինս կարծել յ'այնոսիկ, որք
 շահու առիթ իցեն: Այնպիսի կենցաղ
 վարձկան, ծառայավայելուչ՝ և աղտեղի է
 օտար 'ի պատուասիրութենէ՝ և յ'ազատա
 կանութենէ: Հետևի անազատականութեն
 փոքրաբանութիւն, ծանրամտութիւն, փոք
 րահոգութիւն, յոյժ ցածութիւն, անկազ
 մութիւն, անաղնուականութիւն, և մարդա
 տեցութիւն:

Փոքրահոգութեան:

Եւ փոքրահոգութեան է ոչ պատիւ՝ և
 ոչ անպատւութիւն, ոչ բարեբախտու
 թիւն՝ և ոչ անբախտութիւն կարելն բերել
 այլ պատուեալ՝ թուլանալն, և փոքր ինչ
 բարեբախտեալ՝ ամբարհաւաճիլն, բայց՝ և ոչ
 դուղնաքեայ ինչ անպատւութիւն կարելն բե
 րել, այլ՝ դոյն ինչ ապաբախտութիւնն յոյժ
 մեծ վատաբախտութիւն դատելն. ողբալն
 յ'ամենայնում՝ և տգոհելն՝ կամ դժուարա
 պանիլն: Տակաւին այնպիսի է և փոքրահո
 գին՝ իբրու զամենայն հանդիսմունս՝ և ո
 յ'անդիտութենէ՝ կամ 'ի մոռացմանէ հան
 դիսեալն, անարդանս՝ և անպատւութիւնս
 կոչէ: Հետևի փոքրահոգութեանն փոքրա
 բանութիւն, տրտունջ, պարսաւաբախտու
 թիւն, և յոյժ ցածութիւն:

Ընդհանուր յափռութիւնն առաքինութեան:

Այլ ընդհանրօրէն առաքինութեն է փոյթ
 և առաքինի՝ տրամադրութիւն ունիլն
 վն հոգւոյն, հաստատուն՝ և կարգաւոր շար
 ժութեամբք վարելով, և ըստ ամենայն մա
 սանցն միաբանելով. վասն որոյ՝ և թուի բա
 րի քաղաքավարութեան դու նշան՝ փութա
 ցեալ տրամադրութի հոգւոյն: Ե՛ւ ևս առա

քինու թեանն՝ բարերար գոլն առ արծա
նաւորսն, և զբարիսն սիրել. ոչ տանջանա
կան գոլն, և ոչ պատուհասական՝ այլ հաշ
տական, գթած, և ներողական: Հետեւի ա
ռաքինութեանն քաղցրութիւն, հանդար
տութիւն, բարեմտութիւն, յոյս բարի. տա
կաւին և այսոքիկ՝ ընտանոսէր գոլն՝ և բա
րեկամասէր, ընկերասէր՝ և հիւրասէր, մար
դասէր՝ և գեղեցկասէր, որք միանգամ են ը
առաքինութեան իսկ ներհակքն ասացելոցդ՝
են ընդ չարութեամբն:

Բը չի քար այեանդ թ զըդիւլ թընքաղի.
այդ գիւլըստան ման բըբօր վարաղի:

Գիւլ հըամին փէնջ ուղ՝ վա շէշ բաշէդ.
վը ին դուլըսթան հըամիշա խօշ բաշէդ:

Սաղմոս. 33. 14. Խոտորեաց 'ի չարէ, և
արա՛ զբարի. խնդրեա՛ զխաղաղութիւն, և
երթ զհետ նր: Աչք Տեառն 'ի վերայ ար
դարոց, և ահանջք նր 'ի վերայ աղօթից նց:

Վբաղեբէն: Մօլքէց բօրօտիսադան, դա քմէն
կէթիլի. մօիճիէ մշմիդօբա, դա միսդէվդի
մաս: Թվալնի ուիլիսանի մարթալթա զէ
դա, դա զուրնի միանի լօցվասա մսթսա զէդա:
Լացիօրէն: Դիւլէրտէ ա մաւօ, էթ ֆակ բօ
նում. ինքէրիւ պաշէմ, էթ սէրսէքէրէ
էամ: Օհուլի դօմինի սոլաէր իւստօս, էթ
աւլրէս էիուս ին պրէչէս էօրում:

Յռանարէն: Էկկլինօն ապօ կակու, կէ պիլ
սօն աղաթօն. զիտիսօն իրինին, կէ դիօքսօն
աֆտին: Օֆթալմի կիրիու էպի դիկէուս,
կէ օտա աֆաու իսդէիսին աւտօն:

Հեբրայեբէն: Սուր մէ ուայ, վա էսէհ
թօբ. բաղէշ շաւօմ, վը ուղղֆէ հու:

Էյնէյ Իեհօվահ էլ սադիլիմ. վը օղնայ ու
էլ շաւլըաթամ:

Ֆինիա կօրօնատ օպուս: